

11.06.2021թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՈՐՈՇՈՒՄ թիվ 018651/05

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 11.06.2021թ. թիվ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը. քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 18651 գործը և կից նյութերը.

**ՊԱՐԶԵՑԻ**

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների ԱՁ Մանե Դավթյանի (ՀՎՀՀ՝ 25415622, հասցե՝ ՀՀ ք. Երևան Նանսեն 20 104) հարկային պարտավորությունները 26.04.2021թ-ի դրությամբ կազմել են 1.079.500 ՀՀ դրամ, որից 628.776 ՀՀ դրամ գումարն առաջացել է 2021թ-ի մարտ ամսվա ներմուծման հայտարարագրից: 2021թ-ի մարտ ամսվա ներմուծման հայտարարագրից առաջացած 628.776 ՀՀ դրամ հարկի գումարը ԱՁ Մանե Դավթյանի կողմից ՀՀ Հարկային օրենսգրքի 78-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում չի վճարվել, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170<sup>3</sup> հոդվածով:

Գործի քննությանը ներկայացել է անհատ ձեռնարկատեր Մանե Դավթյանի լիազորված անձ՝ Արամ Դավթյանը և հայտնել է, որ առարկություն չունի:

Այն փաստը, որ Կողմը նախկին մեկ տարվա ընթացքում չի ենթարկվել վարչական պատասխանատվության, սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով. 33. 244<sup>2</sup>. 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170<sup>3</sup> հոդվածի. Մանե Դավթյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 10.000 (տաս հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

**Ծանոթություն.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն

վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտավորությունից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40) Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ստանալու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բացթողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից. այն անձի դիմումով. որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում. իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305. մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. 900005240487՝ տուգանքի վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը: Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից. իսկ տուգանք ընշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով: Ստացա որոշման պատճենը